ՀՐԱՇԻՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԵԶՐՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԸՍՏ ԽԱՉԻԿ ԹԵՈԼԵՈԼՅԱՆԻ

Բանալի բառեր – սփյուռք, ցրոնք, էթնիկ համայնք, սփյուռքագիտություն, սփյուռքի սահմանման հարացույց, իմաստային ընդլայնում, նույնականության զգացում, հավաքական հիշողություն

«Սփյուռք. անդրազգային հետազոտությունների հանդես»-ը իբրև սփյուռքագիտության զարգացման հարթակ

Սփյուռքագիտության՝ որպես նոր գիտակարգի զարգացման և սփյուռքի տեսաբանման գործում նշանակալի է Խաչիկ Թեոլեոլյանի ներդրումը, ով ոչ միայն այս գիտակարգի ամենաականավոր տեսաբաններից է, այլև *«սփյուռքի մասին գիտական գրույցի ծավալման գլխավոր միջոցի»*[1]՝ «Սփյուռք. անդրազգային հետազոտությունների հանդես»-ի (Diaspora: A Journal of Transnational Studies) հիմնադիր-խմբագիրը:

Պարբերականը հիմնվել է Կանադայում 1991թ.: Նոր չէր «սփյուռք» երևույթը, նոր չէր գիտական խոսքը սփյուռքների շուրջ, սակայն ոչ այն ծավալներով, որն սպասվում էր առաջիկա տարիներին: Նախորդ մի քանի տասնամյակներից ի վեր սկսել էր աճել հետաքրքրությունը սփյուռքների նկատմամբ: *Սփյուռք* բառով այլևս չեն բնութագրվում շատ սահմանափակ՝ հրեական, հունական և հայկական սփռումները, *սփյուռքը* չէր զուգորդվում տեղահանության, կորստի, տկարության հետ: Գալիս էր ժամանակը, երբ գիտությունը չէր կարող առանձնակի ուշադրություն չդարձնել սփյուռքային իրողություններին: Պետք է ծնվեր նոր գիտակարգ՝ սփյուռքագիտությունը (Diaspora studies), որի կայացման գործում Խ. Թեոլեոլյանի դերը լավագույնս ընդգծել է իսրայելացի քաղաքագետ Գ. Շեֆֆերը. *«Այս գիտակարգի զարգացմանը նպաստող խոշոր ազդեցությունը եղել է պրոֆեսոր Խաչիկ Թեոլեոլյանի նախաձեռնողականությունը և անսասան նվիրումը՝ հրատարակելու «Սփյուռքը»՝ այս գիտակարգի պարբերականը»*[2]: Սփյուռքների համեմատական ուսումնասիրությունը, ազգության, ազգայնականության, անդրազգայնության խնդիրները գրականագետ Խ. Թեոլեոլյանի գիտական սևեռումի առարկան են դարձել 1990-ական թվականների սկզբներից: «Սփյուռք» հան-

---

[1] Տե՛ս **Brubaker R**., The ‘diaspora’ diaspora. Ethnic and Racial Studies, 2005, 28 (1): p. 4:

[2] **Sheffer G**., Diaspora Politics: At Home Abroad. Cambridge: Cambridge University Press, 2003, p. xi.

դեսը հիմնվել է Կանադայի՝ հետազոտությունների և փաստագրման Զորյան ինստիտուտի հետ համագործակցությամբ: 1991-1996 թթ. հրատարակվել է Օքսֆորդի, այնուհետև՝ Տորոնտոյի համալսարանների հրատարակչություններում[1]: Հենց առաջին համարը 1991 թ. ստացել է «Լավագույն նոր գիտական հանդես» ամենամյա մրցանակը, որը ԱՄՆ-ում շնորհվում է գիտական պարբերականների խմբագիրների խորհրդի կողմից[2]: Հանդեսն անդրադառնում է հին և նոր սփյուռքներին, ազգությանը, ազգայնականությանը, անդրազգայնությանը (transnationalism), համաշխարհայնացմանը (globalization), գաղթականությանը (migration), աքսորին (exile), փոքրամասնություններին (minorities), ետգաղութատիրությանը (postcolonialism)[3]: Նրա էջերում սկսեցին ձևավորվել սփյուռքի տեսության, սփյուռքագիտության՝ որպես միջկրթանքային կամ բազմակրթանքային գիտակարգի հիմքերը[4]:

Խ. Թեոլեոլյանը սփյուռքագիտության վերաբերյալ գործածում է *բազմակրթանքային* եզրույթը՝ նշելով, որ առավել հաճախ գործածվող *միջկրթանքայինը* գրեթե միշտ անհիմն է կիրառվում, քանի որ տարբեր գիտակարգեր, ինչպես օրինակ պատմագիտությունը և գրականագիտությունը, սփյուռքագիտության մեջ մեկտեղվում են՝ կիրառվելով մեկը մյուսի ետևից՝ ուսումնասիրվող թեմայի համար ապահովելով երկդիտակ (binocular) մոտեցում, սակայն առանց ի հայտ բերելու իսկապես նոր հիբրիդային մեթոդ և գիտության առարկա[5]: Սփյուռքյան երևույթները, իհարկե, քննվում էին նաև այլ գիտակարգերի շրջանակներում, իսկ սփյուռքագիտությունը մեկտեղում էր մի շարք գիտակարգեր, ինչպես օրինակ՝ պատմագիտությունը, սոցիոլոգիան,

---

[1] Տե՛ս **Tölölyan Kh**., Redefining Diasporas: Old Approaches, New Identities. The Armenian Diaspora in an International Context, London, Armenian Institute, 2002, p. 23-28.

[2] Տե՛ս **Բայադյան Հ**., Սփյուռք և Diaspora, «Ինքնություն», Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի պարբերական հրատարակություն, Երևան, 1995, էջ 251:

[3] Տե՛ս **Tölölyan Kh.,** Textual Nation: Poetry and Nationalism in Armenian Political Culture. In Inrellectuals and the Articulation of the Nation. Ed. Suny R. G., Kennedy M.D., Ann Arbor, The University of Michigan Press, 1999, p. 107.

[4] Հետագա տարիներին սկսել են հրատարակվել նաև հետևյալ պարբերականները՝ 1999 թ. Մոսկվայում ռուսալեզու "Диаспоры" («Սփյուռք») հանդեսը, որի նպատակն է լուսաբանել ինչպես ռուսական սփյուռքի, այնպես էլ հետխորհրդային Ռուսաստանում ապրող էթնիկ սփյուռքյան համայնքների հիմնախնդիրները: 2002 թ. Տուլուզ-լո-Միրայ համալսարանի "DIASPORAS. Histoire et sociétés" («ՍՓՅՈՒՌՔ. պատմություն և հասարակություններ») ամսագիրը լուսաբանում է սփյուռքի, միգրացիայի, էթնիկ, կրոնական փոքրամասնությունների խնդիրները պատմության, սոցիոլոգիայի և բազմակրթանքային հետազոտությունների տեսանկյունից: 2011 թ. Նյու Դելիում հրատարակվում է "Diaspora Studies" («Սփյուռքի հետազոտություններ») ամսագիրը՝ նվիրված սփյուռքյան (հիմնականում հնդկական) անդրազգային ցանցերի՝ որպես միջազգային հարաբերությունների ուշագրավ գործոնի համեմատական ուսումնասիրությանը: (Տե՛ս **Բեժանյան Ա**., Սփյուռքի մասին տեսությունների համառոտ ակնարկ // « Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 2013, թիվ 1, էջ 211):

[5] Տե՛ս **Tölölyan, Kh.,** The contemporary discourse of diaspora studies, Comparative Studies of South Asia, Africa and the Middle East, 27 (3): 2007: p. 647.

մարդաբանությունը, քաղաքագիտությունը և այլն: Մյուս կողմից՝ այսօր այն ներդրված կամ համալիր կերպով կապված է ազգայնականության, անդրազգայնության, համաշխարհայնացման, ետգաղութատիրության ուսումնասիրությունների հետ[1]: Սփյուռքագիտությունը զարգացող գիտակարգ է. սփյուռքի հարցերով զբաղվում են նոր համալսարաններ, պարբերականներ, և դա պայմանավորված է նախ նրանով, որ հետզհետե աճում է այն մարդկանց թիվը, ովքեր ապրում են սփյուռքներում, հատկապես՝ զարգացած երկրներում (Վ. Սաֆրան)[2]:

Սփյուռքի սահմանման հարացույցը և ընդհանուր նկարագիրը

Սփյուռքյան հետազոտությունների ուշադրության կիզակետում *սփյուռքի* սահմանման խնդիրը հայտնվեց սկզբից ևեթ:

Խնդիրն այն է, որ *սփյուռքը*, որն անտիկ ժամանակներից ի վեր գործածվել էր հրեական, հունական և հայկական համապատասխան սոցիալական ձևավորումները անվանելու համար, իր իմաստաբանական տիրույթում ի հայտ էր բերում փոփոխություն, որի մասին Խ. Թեոլեոլյանը նշել է «Սփյուռք» հանդեսի հենց առաջին՝ ներածական հոդվածում, բնորոշվում է *սփյուռքի* մեջ այնպիսի հասկացությունների ընդգրկմամբ, ինչպիսիք են ներգաղթյալը (immigrant), վտարանդին (expatriate), փախստականը (refugee), հյուր աշխատողը (guestworker), աքսորային համայնքը (exile community), անդրծովյա համայնքը (overseas community),

էթնիկական համայնքը[3]: Այսօր արդեն *սփյուռքը* կիրառվում է նվազագույնը երեք տասնյակ ցրոնքների[4] (dispersion) և անդրազգային համայնքների համար[5]:

---

[1] Տե՛ս **Tölölyan Kh.,** Redefining Diasporas: Old Approaches, New Identities. The Armenian Diaspora in an International Context, London, Armenian Institute, 2002. p. 33:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Տե՛ս **Tölölyan Kh**., The Nation-State and its Others: In Lieu of a Preface. Diaspora, 1991, 1 (1): p. 2. Տե՛ս նաև **Tölölyan Kh**., Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, Diaspora, 1996, 5 (1): p. 3:

[4] Այս եզրույթը գործածում ենք իբրև dispersion-ի համարժեք: *Ցրոնքը* հայերեն գիտական գրականության մեջ կիրառվում է սահմանափակ, հաճախ՝ իբրև սփյուռքի համարժեքը, սակայն այն իր բառարանային բացատրությամբ համապատասխանում է dispersion-ին, որը սփռումի բոլոր կերպերն ընդգրկող եզրույթն է և, ինչպես ցրոնքը, չի մատնանշում սփռումի որևէ պատճառ, հանգամանք: Խ. Թեոլեոլյանը նկատում է, որ *ցրոնքը* երանգավորում ունի՝ բարձր ոճի բառաշերտին է պատկանում (Տե՛ս **Tölölyan Kh.,** Elites and Institutions in the Armenian Transnation, Princeton University: Conference on Transnational Migration, Comparative Perspectives. Diaspora, 9 (1) (http://www.transcomm.ox.ac.uk/-working%20papers/-WPTC-01-21%20Tololyan.doc.pdf): Թեև ոճական կամ հուզարտահայտչական զանազան երանգավորումները եզրույթի դեպքում ընդունելի չեն, սակայն *dispersion*-ը թարգմանել ենք *ցրոնք*, քանի որ սովորաբար այդպիսի երանգավորումները կորսվում են բառի հաճախադեպ կիրառության ընթացքում:

[5] Տե՛ս **Tölölyan Kh**., Stateless power and the political agency of Diasporas: An Armenian Case

Սփյուռքի իմաստային ընդլայնումը չի սահմանափակվում այսքանով: Խ. Թեոլեոլյանը մատնացույց է անում նաև մտավորականների, լրագրողների կողմից բառի շատ անսովոր գործածումներ. երբեմն այն կիրառվում է առհասարկ մարմնից, առարկայից մասնիկների անջատման և ցրման իմաստով: Այդպիսի օրնակներին էր նվիրված «Սփյուռք» հանդեսի «Դիասպորամա» էջը. օրինակ՝ *Egg Cream diaspora* (ձվասերուցքային սփյուռք)՝ կիրառվել է տվյալ ըմպելիքը շշալցնելու և ամենուր առաքելու, հասանելի դարձնելու իմաստով, *anatomical diaspora* (անատոմիական սփյուռք)՝ կիրառվել է մի վեպում, որտեղ հերոսներից մեկը զոհվում է սարսափելի պայմաններում, և նրա մարմինը ծվեն-ծվեն է լինում[1]:

Ցանկացած լեզվաբան կարող է ասել, որ ժամանակի ընթացքում բառիմաստի ընդլայնումը, նեղացումը, շրջումը, վերաիմաստավորումը շատ բնական երևույթներ են: *Սփյուռքը*, սակայն, պարզապես իմաստային ընդլայնման ենթարկված բառի հերթական օրինակ չէ: Խ. Թեոլեոլյանը նկատում է, որ առկա է կերպափոխություն. անցյալ մի քանի տասնամյակների ընթացում (1960-ականներից) դիսկուրսային քաղաքականության փոփոխության, ինչպես նաև նյութական, արտադիսկուրսային իրողությունների հետևանքով մի կողմից ավելացել է սփյուռքների թիվը, մյուս կողմից՝ սփյուռք եզրույթի զբաղեցրած իմաստային դաշտը[2]:

Որևէ խմբի նկատմամբ սփյուռքի՝ որպես եզրույթի կիրառության հարցում տեսաբանները, հետազոտողները ցուցաբերում են տարբեր մոտեցումներ՝ կա՛մ կարևորելով այս կամ այն բնութագրիչների առկայությունը և առաջարկելով սփյուռքի սահմանման տարբեր հարացույցներ (paradigma), կա՛մ այն անխտիր կիրառելի համարելով հայրենիքից (կենտրոնից) դուրս գտնվող ցանկացած խմբի համար՝ անկախ սփռումի պատճառներից, չափից[3]: Ռ. Փանոսյանը նկատում է, որ հետազոտողների այս երկու խմբերից առաջինները սովորաբար *«հրեայ, հայ եւ այլ սփիւռքներու մասնագետներ են, որոնք կ'ուզեն կարգ մը գիտական սահմանումներ ընել, ընդհանրապես սփիւռքցի են ասոնք ու կը դիտեն սփիւռքը ներսէն դուրս»*, երկրորդները՝ *«կօգտագործեն յետարդիական մոտեցումը, ընդհանրապես կը դիտեն սփիւռքները դուրսէն ներս, ու շատ ավելի լայն սահմանում կու տան անոր»*[4]: Խ. Թեոլեոլյանը նշում է, որ վերջին մոտեցմամբ հավասարարժեք են դառ-

---

Study. In Tototicaguena G. (Ed.), Opportunity structures in Diaspora Relations. Reno, Nevada, Center for Basque Studies, 2007, p. 216:

[1] Տե՛ս **Tölölyan Kh**., Diasporama, Diaspora, 1994, 3 (2), p. 235. Տե՛ս նաև **Tölölyan Kh.,** Diasporama, Diaspora, 2000, 9 (2), p. 309:

[2] Տե՛ս **Tölölyan Kh**., Rethinking Diaspora(s)..., p. 3:

[3] Մանրամասն տե՛ս **Բեժանյան Ա**., նշվ. աշխ., էջ 211-227: Տե՛ս նաև **Փանոսեան Ռ**., Տեսական հայեցակարգ Հայրենիք-Սփիւռք յարաբերություններու. հետեւութիւններ, նկատողութիւններ եւ առաջարկներ // «Սփյուռքագիտություն», տարեգիրք, Երևան, 2012, էջ 31-44:

[4] **Փանոսեան Ռ**., նշվ. աշխ., էջ 35-38:

նում *dispersion* և *diaspora՝ ցրոնք* և *սփյուռք*, եզրույթները: Եթե առաջինը ենթադրում է պարզապես սփռում, ցրվածություն, ապա վերջինը, բացի ցրումից, նաև՝ այսպես ասած՝ «տեսակի պահպանում և վերարտադրում»: Այս իմաստը արտահայտված է հենց բառի նախահնդեվրոպական բառարմատում. *spr եռագրից ձայնավորների հավելումով կազմվում են այնպիսի բառեր, ինչպիսիք են *spore*-ը (սպոր), *sperm*-ը (սպերմա), *spread*-ը (տարածվել), *disperse*-ը (ցրվել)[1]:

Թեև 1996 թ. Խ. Թեոլեոլյանը նշում է, որ *սփյուռքը «վտանգի տակ է՝ դառնալու խառնակ կերպով տարողունակ հասկացություն»*[2], իսկ արդեն 2007 թ.՝ որ *«սփյուռքի և ցրոնքի միջև տարբերակվածությունը պահպանելու պայքարը տանուլ է տրված»*[3], սակայն նրա հոդվածները լավագույնս քննում և վերհիշեցնում են, թե իրարից որքան տարբեր են *սփյուռք* անվանումը ստացած հանրույթները:

Խ. Թեոլեոլյանը սփյուռքի սահմանման համար տալիս է հետևյալ հարացույցը՝

ա) Հարկադրանք, որը պատճառ է դառնում սփռումի, երբ մեծ թվով մարդիկ քաղաքական, տնտեսական կամ այլ պարտադրանքով արմատախիլ են արվում հայրենիքից և տարաբնակվում:

բ) Նույնականության զգացում, որը կա՛մ հենվում է նախքան սփռումը հայրենիքում արդեն իսկ ձևավորված ինքնության վրա, կա՛մ առաջանում, երբ բնօրրանում տարանջատումներ, բայց նաև ընդհանրություններ ունեցող խմբերին ընդունող երկիրն ընկալում է իբրև նույնականների:

գ) Հավաքական հիշողություն՝ որպես ինքնության հիմնատարր. համայնքները պահպանում են, իսկ երբեմն կառուցում հավաքական հիշողությունը:

դ) Համայնքային սահմանների պահպանում, որը կարող է լինել կա՛մ հենց սփյուռքների կամքով, կա՛մ ընդունող երկրի պահանջով, որը չի ցանկանում նրանց ձուլել, կամ՝ այս երկուսը միաժամանակ:

ե) Հաստատութենական (ինստիտուցիոնալ) կապ սփյուռքյան տարբեր համայնքների և հայրենիքի միջև: Վերջինիս բացակայության դեպքում սփյուռքը ցուցաբերում է կամք՝ պահպանելու հավատարմությունը հայրենիքի միֆականացված գաղափարին[4]:

---

[1] Տե՛ս **Tölölyan Kh**., Rethinking Diaspora(s)…, p. 10-11:

[2] Նույն տեղում, էջ 8:

[3] **Tölölyan Kh**., The contemporary discourse…, p. 648-649.

[4] Այս առումով որպես բացառություն Խ. Թեոլեոլյանը նշում է գնչուներին, որոնք կատարյալ ցրոնք են՝ առանց հայրենիքին սևեռված որևէ հայացքի, առանց նրա մասին հիշողության և վերադարձի ձգտումի: (Տե՛ս **Tölölyan Kh**., Diaspora studies: Past, present and promise, working paper 55, International Migration Institute, University of Oxford, 2012, 11 pages):

զ) Տևականություն. ցրոնքը սփյուռք է դառնում այն դեպքում, երբ որպես առանձին հավաքականություն տևում է առնվազն երեք սերունդ[1]:

Նշված բնութագրիչների էությունը առավել ըմբռնելի է դառնում էթնիկականի և սփյուռքայինի տարբերակման անհրաժեշտության համատեքստում: Ի՞նչն է տարբերակում սփյուռքյան համայնքը էթնիկ համայնքից այն դեպքում, երբ երկուսն էլ զծում և «հսկում» են խորհրդանշական, վարքագծային սահմաններ, որոնցով էլ հավաքական ինքնությունը մնում է այլ, քան գերիշխող ինքնությունը, որը տիրում է ընդունող երկրում[2]:

Էթնիկ և սփյուռքյան համայնքների տարբերակման համար Խ. Թեոլեոլյանը նշում է հետևյալ մի քանի առանձնահատկությունները: Էթնիկ համայնքը սփյուռքային համայնքից տարբերվում է նրանով, որ առաջինի դեպքում հայրենիքի և այլ երկրների ազգակից համայնքների հետ կապեր պահպանելու հանձնառությունը բացակայում է, թույլ է կամ լավագույն դեպքում ընդհատումներով է և ցուցաբերվում է անհատների, այլ ոչ թե համայնքի կողմից՝ որպես ամբողջության: Մինչդեռ սփյուռքի համար այլ երկրներում ազգակից համայնքների և հայրենիքի հետ հաստատութենականացված կապը հիմնարար հատկանիշ է[3]: Սփյուռքի կարևոր հատկանիշներից է հայրենիքի նորոգության և վերադարձի (հայրենադարձության) գաղափարախոսությունը, ընդ որում՝ դեպի հայրենիք սփյուռքանդամները վերադառնում են ոչ միայն բառացիորեն, այլև (առավել հաճախ)՝ «վերա-դառնում» են առանց իրական հայրենադարձության. նրանք դարձ են կատարում դեպի հայրենիք՝ ճամփորդության, դրամական փոխանցումների, մշակութային փոխանակումների, քաղաքական լոբբինգի և հայրենիքի հետ այլ կապեր պահելու տարբեր ջանքերի շնորհիվ: Էթնիկ համայնքների դեպքում հայրենիքի հետ այսպիսի շարունակական կապը բնութագրական չէ[4]:

Սփյուռքյան համայնքները պահպանում են հայրենիքի լեզվի, կրոնական, սոցիալական և մշակութային փորձառության տարրերը՝ կա՛մ անեղծ, կա՛մ, քանի որ ժամանակ է անցել, միախառն, երկմշակութային՝

---

[1] Թվարկված չափանիշներից առաջին հինգը գրվել են 1996 թ. (տ՛ս Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment" Diaspora, 1996, 5 (1)), իսկ վերջինը ավելացվել է հետագայում. 2005 թ. գրված մի հոդվածում նշվում է տևականության կարևորության մասին, սակայն չի հստակեցվում, թե քանի սերունդ պետք է շարունակվի տվյալ հանրույթը՝ սփյուռք կոչվելու համար (տե՛ս **Tölölyan Kh**., Armenian Diaspora. In Encyclopedia of Diasporas, Immigrant and Refugee Cultures Around the World. Ed.: Ember M., Ember C., Skoggard I., New York, 2005, p. 35-46): Իսկ 2011 թ. Երևանում սփյուռքների, սփյուռքագիտության վերաբերյալ հրապարակային մի դասախոսության ժամանակ Խ. Թեոելոլյանը նշում է հատկապես երեք սերունդների շարունակության մասին (տե՛ս http://www.arteria.am/hy/1331123076 (հասանելի է՝ 16.02.2016)):

[2] Տե՛ս **Tölölyan Kh**., Rethinking Diaspora(s)…, p. 16:

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] Տե՛ս **Tölölyan Kh**., The contemporary discourse ..., p. 647.

հիբրիդային ձևով, իսկ էթնիկ խմբերը դրսևորում են երկմշակութայնության թույլ աստիճան[1]:

Որպես էնթիկ համայնքի օրինակ Խ. Թեոլեոլյանը բերում է Ամերիկայի իտալացիներին, որոնց էթնիկ նույնականացումը դրսևորվում է խոհանոցային, երաժշտական, կրոնական տոների, լեզվական փորձառություններում և ծեսերում: Շատերը մասնակցում են միայն հատուկ առիթներին. շքերթներ են կազմակերպում, դրոշներ ծածանում, պաստառներ ցուցադրում: Առանձին անձինք մտահոգություն են ցուցաբերում այլ երկրներում և հայրենիքում գտնվող իրենց ազգականների բարեկեցության համար, եղբայրական (fraternal) կամ հայրենակցական միությունները դրամահավաք են կազմակերպում նախնիների հայրենի քաղաքի կամ գյուղի համար: Սակայն շատ քիչ հավանական է, որ նրանք գործեն հետևողականորեն կազմակերպված ուղիով՝ մշակելու օրակարգ՝ քաղաքական և մշակութային դաշտերում ներկայանալու համար ինչպես ընդունող երկրում, այնպես էլ հայրենիքում: Խ. Թեոլեոլյանը մատնացույց է անում, որ ֆիլմերում մաֆիայի կարծրատիպային ներկայացումների դեմ կազմակերպված պայքարը մեկն է այն քիչ, բայց և հաճախ ընդհատվող ջանքերից, որ Ամերիկայի իտալացիները ձեռնարկել են իրենց քաղաքական և մշակութային առումով ներկայացնելու համար: Ի հակադրություն դրա՝ հարացուցային հին սփյուռքները, ինչպես օրինակ հրեականը և հայկականը, կատարում են գաղափարախոսական զգալի աշխատանք իրենց համայնքները լիապես կապված դարձնելու այլ ազգ-պետություններում հաստատված համայնքների և հայրենիքի հետ: Երկու սփյուռքներն էլ ընդունող երկրներում իրականացնում են լոբբինգ և հաստատակամորեն «դարձ են կատարում» դեպի հայրենիք: Նվիրաբերելով գումարներ, մարդկային ռեսուրսներ՝ փորձում են օժանդակել կամ ազդել հայրենիքի տնտեսությանը, մշակույթին, քաղաքականությանը: Ընդունող երկրներում բոլոր մակարդակի ընտրություններում աջակցում են այն թեկնածուին, որն իրենց էթնիկ խմբից է՝ էթնոսփյուռքյան հպարտությունից զատ՝ բոլոր մակարդակներում ապահովելով իրենց սփյուռքյան շահերի ներկայացվածությունը: Իհարկե, այսպիսի ջանքերը միշտ չէ, որ խրախուսվում են հայրենիքի կառավարության և հասարակության կամ այլ ազգ-պետությունների կողմից[2]:

Էթնիկ խումբը սփյուռքից բաժանող սահմանները, սակայն, հստակ գծված չեն, այլ ներթափանցալի են ու «հոսուն» և ի պատասխան տարբեր գործընթացների՝ համայնքում ներքին շարժերի, հայրենիքի և ընդունող

---

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս **Tölölyan Kh**., Rethinking Diaspora(s)…, p. 16-17: Տե՛ս նաև **Tölölyan Kh**., The Impact of Diasporas on US Foreign Policy. In Pfaltzgraff R., Richard H., Shultz Jr., Ethnic Conflict and Regional Instability: Implications for U.S. Policy and Army Roles and Missions, Washington, DC: U.S. Army, 1994, p. 147-160.

երկրի քաղաքական, մշակութային անցուդարձի, փոփոխվում են. *«Ինչ-որ իմաստով սփյուռքային համայնքը կրում է թե՛ էթնիկական, թե՛ սփյուռքային մշակութային ինքնությունների և քաղաքական փորձառությունների պարադոքսային համակցումը»*[1], և *«Նախընտրելի է խոսել անձանց և համայնքների մասին, որոնք կյանքի որոշակի ոլորտներում վարվում են ինչպես էթնիկ խմբերի ներկայացուցիչները, որոշ ոլորտներում՝ ինչպես սփյուռքանդամները, և որ առավել կարևոր է՝ անցում են կատարում մեկից մյուսը. շարժունությունը ժամանակակից էթնոսփյուռքի ներքին և արտաքին հատկանիշն է»*[2]:

Երբ *սփյուռքին* տրվում է շատ լայն իմաստ՝ «բոլոր այն մարդիկ, ովքեր ապրում են հայրենիքից դուրս՝ անկախ սփռումի պատճառներից, չափից», ստացվում է, որ էթնիկ խմբերը սփյուռքների ենթախումբ են: Խ. Թեոլեոլյանը նշում է, որ սփյուռքային բոլոր համայնքները էթնիկական են, քանի որ պահպանել են էթնիկ հատկանիշները, սակայն ոչ բոլոր էթնիկ համայնքներն են սփյուռքային, քանի որ համախմբված չեն այնպես, ինչպես սփյուռքային համայնքները[3]:

Սփյուռքը սահմանող հարացույցի վերջին կետը՝ առնվազն երեք սերունդների շարունակականությունը, որը Խ. Թեոլեոլյանը ավելացրել է հետագայում, բացատրվում է նրանով, որ առաջին սերնդի գաղթականների՝ հայրենիքի հետ կապը հիմնվում է անձնական, ազգակցական կապերի վրա, որոնք դեռ ուժեղ են: Նրանց երեխաների՝ երկրորդ սերնդի մոտ այդ կապերը թուլանում են, սակայն դեռ առկա են շփումները հայրենիքում ապրող տատիկների, պապիկների, հեռավոր զարմիկների հետ: Երրորդ և հետագա սերունդներում անձնական շփումները տեղի են տալիս և փոխարինվում հաստատութենական կապերով: Երբ ընդունող հասարակությունը չի ցանկանում ձուլել տվյալ խմբին, սփյուռքայնացումը առավել դյուրին է, սակայն երբ մշակութային հիբրիդացման, հեշտությամբ քաղաքացիություն ձեռք բերելու, տնտեսական հնարավորությունների հավասարության պայմաններում խումբը **գիտակցաբար** շարունակում է պահպանել իր յուրահատկությունները, արդեն կարելի է խոսել նրա լիարժեք սփյուռքայնացման մասին[4]: Այս համատեքստում, հայրենիքի հետ կապերի հաստատութենականացումից բացի, կարևորվում են հիշողության և հիշատակությունների համար կոլեկտիվ աշխատանքը, ինքնության գաղափարախոսության մշակումը[5]:

---

[1] **Tölöyan Kh**., Elites and Institutions in …, (http://www.transcomm.ox.ac.uk/-working%20papers/-WPTC-01-21%20Tololyan.doc.pdf).

[2] **Tölölyan Kh**., Rethinking Diaspora(s)…, p. 18.

[3] Տե՛ս **Tölölyan Kh**., Elites and Institutions… (http://www.transcomm.ox.ac.uk/-working%20 papers/-WPTC-01-21%20Tololyan.doc.pdf):

[4] Տե՛ս http://www.arteria.am/hy/1331123076 (հասանելի է՝ 16.02.2016): Տե՛ս նաև Теория диаспор глазами отцов-основателей, Интервью с Хачиком Тололяном, «НЛО», 2014, 3 (127). (http://magazines.russ.ru/-nlo/2014/3/3t.html):

[5] Տե՛ս **Tölölyan Kh**., The contemporary discourse of diaspora studies…, p. 650-651.

Խ. Թեոլեոլյանը սփյուռքի համար կարևոր հատկանիշ է համարում նվիրված, ակտիվ փոքրամասնության՝ «առաջնորդող ընտրախավի» դերակատարությունը, որը հիմնում է սփյուռքյան հատուկ մտահոգություններ ունեցող կազմակերպություններ, լոբբինգ է իրականացնում հայրենիքի կառավարության համար կամ նրա դեմ (օր.՝ ԱՄՆ-ում ֆիլիպինյան շարժումը Ֆերդինանդ Մարկոսի ռեժիմի դեմ), դրամահավաքներներ հայրենիքի համար (հրեա գաղթականների՝ Ռուսաստանից Իսրայելում հաստատվելու համար), կամ պայքարում է՝ մոբիլիզացնելու համար անդրազգային կրոնական համայնքը ի նպաստ հայրենիքում նոր շարժման (սիկհերը՝ Կանադայում): Հատկանշական է, որ հաստատություններում ներգրավված չեն լինում որոշ շատ կարևոր էթնոսփյուռքյան դեմքեր՝ գիտնականներ, մտավորականներ, ովքեր ստեղծում են սփյուռքյան դիսկուրսը, գրողներ, արվեստագետներ, որոնց բարձրարժեք կամ ցածրարժեք մշակութային արտադրանքը ազդում է սփյուռքյան ինքնության ձևավորմանը[1]:

Խ. Թեոլեոլյանը ընդգծում է, որ այն փորձառությունները և հարաբերությունները, որոնք պայմանավորում են համայնքի ներսում նույնականությունը (որը երբեմն կեղծ է) և շրջապատող հասարակությունից տարբերությունները, փոխվում են ժամանակի և տարածության մեջ: Նույնականության զգացումը, որն ունեն առաջին ներգաղթյալները, անհնար է դառնում պահպանել հետագա սերունդների մեջ: Բացի դրանից՝ փոխվում են ոչ միայն սփռվածները, այլև հայրենիքում ապրողները: Երբ անձանց մի մեծ հատվածը՝ հատկապես մշակութային էլիտայի շրջանում, ընդունում է փոփոխությունը, նույնականացման դիսկուրսի բովանդակությունն ու ընդգրկումը, փոխվում և զարգանում են սփյուռքային մի շարք տիպական փորձառություններ[2]:

Սփյուռքային կեցվածքը (diasporicity) հենվում է տարբերությունների վրա. սփյուռքյան համայնքը ինքնիրեն դիտում է իբրև միաժամանակ կապված, սակայն տարբեր նրանցից, որոնց շրջանում տեղակայվել է, և ուժգնորեն կապված, սակայն որոշ առումներով տարբեր հայրենիքում ապրող ժողովրդից: Տարբերությունների պահպանումը կարող է պայմանավորված լինել ընդունող երկրի ճնշումներով, մերժումով՝ ձուլելու նրանց, կամ սփյուռքի ընտրությամբ՝ իրականացնելու մշակութային և քաղաքական աշխատանք՝ պահպանելու տարբերակող այն հատկանիշները, որոնք առանցքային են այն դեպքում, երբ տվյալ երկիրը հնարավորություն է տալիս, նույնիսկ քաջալերում է ձուլումը: Երբ հնարավոր է, սփյուռքյան համայնքները ձգտում են ինտեգրման և քաղաքացիության՝ առանց ձուլվելու:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 647-655:

[2] Տե՛ս նույն տեղում:

Խ. Թեոլեոլյանի աշխատություններում որքան որ հստակ է սփյուռքի դիմագիծը, նույնքան էլ զգայուն է նրա նկարագիրը ներքին և արտաքին տեղաշարժերի համատեքստում. *«Թերևս ամենաճիշտը սփյուռքը ոչ թե ամրագրված հղացքի և սոցիալական ձևավորման անվանում, այլ հավաքական նույնականացման գործընթաց և ինքնության ձև դիտելն է, որը նշագրվում է հարափոփոխ տարբերությունների միջոցով, որոնք էլ քարտեզագրում են … կոնկրետ համայնքների՝ որպես ցանցկեն սահմաններով կղզյակի (անկլավի) փոփոխամետ սահմանագծերը»*[1]: Բացի դրանից՝ *«ոչ բոլոր սփյուռքյան համայնքներն են ի հայտ բերում այս բոլոր վարքագծերը (սփյուռքը սահմանող առանցքային բնութագրիչները - Հ.Վ.) ամեն մի ժամանակ, այլ վարքագծերի և փոխառությունների այս կազմաձևը ժամանակի ընթացքում բնութագրում է տնականություն ունեցող սփյուռքներին»*[2]:

Այսպիսով, Խ. Թեոլեոլյանը տարբերակում է տիպիկ սփյուռքային սոցիալական ձևավորումը պարզապես *սփյուռք* անվանումը ստացած, նմանատիպ, սակայն էական կետերում տարբերվող այլ հանրույթներից: Կարելի է ասել՝ բանաձևային նշանակություն ունի *«անդրազգային պահի պետականազուրկ իշխանություն»* ("stateless power[3] in the transnational moment") ձևակերպումը, ըստ որի՝ *սփյուռքը* ենթադրում է համախմբվելու, կազմակերպվածության, հանձնառությունների, ուստի և հավակնությունների բարձր աստիճան հասարակական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտներում:

Սփյուռք եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները

Խ. Թեոլեոլյանը հանգամանորեն քննել է այն գործոնները, որոնց ազդեցությամբ 1960-ական թվականներից *սփյուռքը* կորցրեց իր իմաստի սահմանափակությունը, հստակությունը՝ միևնույն ժամանակ դառնալով շատ տարածված, երբ այս հասկացությունը դարձավ տարբեր ցրոնքներին կամ առնվազն նրանց ամենահստակ հատվածներին ներկայացնելու օգտակար,

---

[1] Նույն տեղում, էջ 649-650:

[2] **Tölölyan Kh**., The Armenian Diaspora as a transnation actor and as a potential contributor to conflic resolution, Univeristy for Peace, Capacity Building for Peace and Development: Rols of Diaspora, Toronto, Canada, 2006, October 19-20, 54 pages, p. 3.

[3] Այս դեպքում power բառը state power-ն է՝ երբ տարածքը, բնակչությունը և միասնական ազգային հասարակությունը դրսևորում են տնտեսական, ռազմական, մշակութային ուժ, որը ապահովում է ազգի և պետության անվտանգությունն ու ինքնավարությունը: Քաղաքագիտության դիսկուրսում սա power-ի առաջին իմաստն է, երբ քաղաքականությունը այնպիսի գործընթաց է, որով վերնախավը տիրապետում է այդ ուժի լծակներին և գործադրում այն՝ հետապնդելու և նվաճելու սեփական կամ պետության քաղաքացիների շահերը: Տե՛ս **Tölölyan Kh**., Stateless power and the political agency of Diasporas: An Armenian Case Study. In Tototicaguena G. (Ed.), Opportunity structures in Diaspora Relations. Reno, Nevada, Center for Basque Studies, p. 220-221:

նույնիսկ ցանկալի ուղի հատկապես ԱՄՆ-ում: Այս գործընթացում Խ. Թեոլեոլյանը առանձնացրել է մի կողմից՝ նյութական, ժողովրդագրական, սոցիալական, մյուս կողմից՝ դիսկուրսիվ, գաղափարախոսական գործոնները, որոնք համագործական (սիներգետիկ) փոխազդեցությամբ ձևավորել են միմյանց և ունեցել համամետ ազդեցություններ[1]:

Այս գործոններից առաջինները կանխորոշում են, երաշխիք են դառնում, որ սփռումը կհանգեցնի ոչ թե ձուլման, այլ՝ սփյուռքայնացման: Դրանք են՝

ա) *Արագացող ներգաղթը դեպի արդյունաբերացված աշխարհ.* դեպի Միացյալ Նահանգներ՝ 1965 թ. ներգաղթի օրենքից հետո (Hart-Caller Imigration Act), Կանադա, Ավստրալիա, Արևմտյան Եվրոպա՝ տարբեր տարիների՝ 1945-1960 թթ. միջակայքում, տեղի ունեցավ հոծ զանգվածների ներգաղթ: Համաշխարհայնացման և անդրազգայնացման դարաշրջանում, երբ հաղորդակցվելը, ճամփորդելը դարձան ավելի դյուրին, այս գաղթականները հայրենիքի և այլ ազգակից համայնքների հետ սկսեցին կապեր պահպանել այնպիսի չափերով, որոնք բնութագրական չէին ավելի վաղ շրջանի գաղթերի համար, երբ հայրենիքից հարաբերական մեկուսացումը նպաստում էր էթնիկացմանը կամ ձուլմանը:

բ) *Ընդունող երկրում իրավական, քաղաքական, վարչական, մշակութային-գաղափարախոսական մեխանիզմները՝ կապված ներգաղթի հետ.* ձուլումը կամ էթնիկ համայնքների լիարյուն կյանքը բազմակարծ հասարակության, բազմամշակութային, բազմազգ պետական կառուցվածքում գտնվող սփյուռքների մեջ մեծապես կախված է ընդունող երկրի հասարակությունից և իրավական-քաղաքական համակարգից. նրանք ցուցաբերու՞մ են անկողմնակալություն, հանդուրժողականություն, ակտիվորեն զբաղվում են ակուլտուրացիայո՞վ, քաղաքացիացումո՞վ, ինտեգրմա՞մբ, թե՞ ձուլմամբ: Այս հարցում տարբերվում են, օրինակ, մի կողմից՝ Միացյալ Նահանգները, Կանադան, Արգենտինան, Բրազիլիան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, որոնք սկսել են (տարբեր չափերով) հնարավորություն տալ ներգաղթյալներին դառնալու քաղաքացիներ և ընտրելու՝ ձուլվե՞լ, թե՞ հանդես գալ որպես էթնոսփյուռքյան խմբեր, մյուս կողմից՝ Արևմտյան Եվրոպան, որի հարուցած դժվարությունները երբեմն խոչընդոտում են, երբեմն՝ ոչ՝ ցրոնքների կազմավորմանը որպես սփյուռքների կամ մասնակցությանը ազգ-պետության կյանքին:

գ) *Գոյություն ունեցող հաստատութենական կազմակերպության դիրքը հայրենիքում (կամ կենտրոնում), թե որքանով են այդ կազմակերպությունները ուղեկցում ներգաղթյալներին.* սրա լավ օրինակը Լիբանանի քաղաքացիական պատերազմի պատճառով համայնքից հեռացած հայերն են, ովքեր

---

[1] Տե՛ս **Tölölyan Kh**., Rethinking Diaspora (s): Stateless Power in the Transnational Moment. Diaspora: A Journal of Transnational Studies, 5(1): p. 3-36:

հաճախ շարունակում են կապված մնալ իրենց պատկանած կազմակերպության մասնաճյուղին:

դ) Ներգաղթյալների մասնաբաժինը տեղաբնիկների համեմատ. երբ ներգաղթյալների կենտրոնացված բնակավայրերը դառնում են սփյուռքային ազդեցիկ կղզյակներ (անկլավներ), նրանք գիտակցում են իրենց կարողությունները՝ միջամտելու ընդունող երկրի, ինչպես նաև հայրենիքի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին: Իհարկե այն դեպքում, երբ ընդունող երկրի և հայրենիքի կառավարությունները այս գործունեությունները համարեն խնդրահարույց, կարող են վրա հասնել սահմանափակումներ:

ե) *Ռասայական տարբերությունը.* սովորաբար զատման պատճառ է դառնում՝ հանգեցնելով կղզյակների ստեղծմանը և հող ստեղծելով հավանական սփյուռքայնացման համար: Վառ օրինակը աֆրաամերիկացիներն են:

զ) *Կրոնական անհամատեղելիությունը.* այս գործոնը ամրացնում է այն սահմանները, որոնց շրջանակներում սահանափակվում և պահպանվում են էթնոսփյուռքյան կղզյակները: Միևնույն ժամանակ հիմնական (խոշոր) կրոնների անդրազգային բնույթը նպաստում է դյուրին շփմանը թե՛ համայնքների, թե՛ հայրենիքի հետ: Այսպես՝ մուսուլման հյուսիսաֆրիկացիները Ֆրանսիայում ավելի դժվար են «դառնում ֆրանսիացի», քան կաթոլիկ պորտուգալացիները, Ալժիրի հրեաները, Լիբանանի մարոնիթները կամ հույն ուղղափառ քրիստոնյաները: Իսլամը միաժամանակ և՛ «օգնում է» հյուսիսաֆրիկացիներին քրիստոնյա ֆրանսիացիներից տարբեր մնալու, և՛ հնարավորություն է տալիս դաշնակցելու այլ մուսուլմանների հետ՝ լինեն դրանք արաբախոսներ, թուրքեր թե պակիստանցիներ:

Մյուս գործոնները՝ վերջին մի քանի տասնամյակների քաղաքական իրադարձությունները, գիտական քննարկումներ են, որոնք բազմաթիվ ցրոնքների քաղաքական և մտավորական վերնախավի մի խումբ ներկայացուցիչների մղել են ներկայանալու որպես սփյուռք՝

ա) *Հավաքական սուբյեկտի հաստատումը.* համայնք-սուբյեկտը, որը դեռևս միայն սփյուռքայնացման շեմին է, կենտրոնանում է ներքին հարցերի վրա և աշխատում չկորցնել հիմնական, էական նկարագիրը՝ պահպանելով ինքնավերարտադրման կառույցները՝ դպրոցներ, կրոնական հաստատություններ, թերթեր, ռադիոկայաններ և այլն: Համայնք-սուբյեկտը կարող է կերպափոխվել հավաքական սուբյեկտի միայն այն նոր դիսկուրսի ազդեցությամբ, որը նրա հայացքը կուղղի էթնիկ համայնքից անդին՝ դեպի հայրենիք, դեպի այլ ցրոնքներ և դեպի առավել ակտիվ ներգրավվածություն գերիշխող ազգային խմբում և պետական համակարգում: Նման ուղղորդումը կատարվում է քաղաքական, հասարակական և մտավորական վերնախավի կողմից:

բ) *Իսրայել պետությունը՝ որպես սփյուռքյան նվաճման օրինակ.* շուրջ երկուհազարամյա աքսորից և անիշխանությունից հետո հրեական սփյուռքի կողմից ստեղծված Իսրայել պետությունը, որի կացությունը 1948 թ. և նույ-

նիսկ 1956 թ. արաբա-իսրայելական պատերազմներից հետո ոմանք շարունակում էին համարվել անորոշ, չէր կարող այդպիսին դիտվել արդեն 1967 թ. հունիսի իրադարձությունների պրիզմայով դիտարկելիս, երբ *սփյուռք* հասկացությունը, ինքնանվանումը և սփյուռքի «կերպարը» սկսում էին թվալ խոստումնալից: Երկու կամ բազմաթիվ տեղերի հավատարմությունը և «պատկանելությունը» այժմ ընկալվում էին ապրելու գուցեև բարդ ուղի, բայց նաև՝ հպարտության և պետականազուրկ իշխանության աղբյուր, որը հնարավոր կդարձնի պահպանել թե՛ հայրենի պետությունը, թե՛ էթնոսփյուռքյան համայնքը: Հիմնվելով հետագա տարիների հրեական լոբբինգի հաջողության վրա՝ կուբացի, արաբ, հույն, Կիպրոսի հույն, իռլանդացի, հայ և այլ էթնիկ առաջնորդներ եզրակացրին, որ վկայակոչելով հրեական օրինակը՝ կարող են իրենց համայնքներում ակտիվացնել տնտեսական, քաղաքական, մշակութային ներուժը, որը մինչ այդ մնացել էր չօգտագործված:

բ) *Մասնավոր շահառուի կարգավիճակը.* 60-ականներին ԱՄՆ Դաշնային կառավարության հաստատուն ապաօրինականացումը (դելեգիտիմացիա) նշանակալի եղավ այնպիսի համայնքների համախմբման համար, որոնք մինչ այդ չէին տիրապետել էթնոսփյուռքյան որևէ շահ հետապնդող քաղաքական ուժի: Էթնիկ խմբերի առաջնորդները հնարավորություն ստացան գործելու որպես սփյուռքյան մասնավոր շահառու խմբեր (“special interest” groups)՝ ոչ պակաս օրիականությամբ, քան այլ շահառու խմբեր և ի տարբերություն նախորդ շրջանի՝ առանց մտահոգվելու ամերիկյան ազգային շահի նկատմամբ անհավատարմության, հատվածականության մեղադրանքի համար:

գ) *Պետական իշխանության փոխանցումը Եվրոպայում.* այնպիսի ժամանակներում, երբ ազգ-պետություններին վերապահված որոշ կարգավորող ուժեր փոխանցվում են վերազգային կառույցներին, միևնույն ժամանակ՝ որոշ պետություններ էլ ապակենտրոնացման և դաշնայնացման միջոցով փոխանցում են ենթաազգային կառույցներին, շեշտվում է հավանականությունը, որ սփյուռքները, որոնք միաժամանակ *ենթա-* և *անդր*ազգային են, կարող են հավակնել նոր դիրքի այս գործընթացում:

դ) *Սփյուռքները՝ որպես ընդունող երկրի կառավարության գործակալներ.* դրդված Միացյալ Նահանգների կողմից՝ պարտադրելու պաշտոնական ժողովրդավարությունը և կապիտալիզմը՝ որոշ սփյուռքյան վերնախավեր հոժարակամ գործիքներ են դառնում հայրենիքում «արևմտյան» արժեքներ տարածելու համար: ԱՄՆ քաղաքականությունը արտոնում է համագործակցող, ակտիվ ափյուռքյան վերնախավերին, որոնք պատրաստակամ են կատարել ԱՄՆ քաղաքականության կողմից իրենց պատվիրված դերը: Այս գործունեությունը, որը հիմնականում սահմանափակվում է արտաքին քաղաքականության կոնկրետ ոլորտներում, անդրադառնում է համայնքի վրա և փոխում նրա գաղափարախոսական մթնոլորտը:

ե) *Ամերիկյան համալսարանը.* գիտնականների կողմից *սփյուռք* հղացքի ընդունման համար մեծ եղավ գիտաուսումնական շրջանակներում ինքնության, տարբերության և բազմազանության՝ որպես հետազոտության կարևոր խնդիրների արժևորումը: Մերժվեցին ձուլվելու, միատարրության (homogenization) գաղափարները, և հետազոտական նյութերը կենտրոնացան էթնիկ փոքրամասնությունների շուրջ, սկսեցին ուսումնասիրվել նրանց ինքնության, ընդհանուր հասարակության հետ հարաբերությունների խնդիրները[1]:

Այսպիսով, սփյուռք հասկացության տարածումը և արժևորումը մեծ չափով կապվում են ազգային ինքնության կարևոր տարրերը պահպանելու, սփյուռքային ինքնություն ստեղծելու հնարավորությունների և սփյուռքի՝ միջազգային հարաբերություններում ուշագրավ գործոն դառնալու հետ:

Грацин Варданян – *Определение «диаспоры» и причины семантического расширения термина по Хачику Теолеоляну*

Диаспороведение как междисциплинарная научная дисциплина было сформировано в начале 1990-х гг., когда по инициативе Хачика Теолеоляна в Канаде стал публиковаться журнал «Диаспора. Журнал транснациональных исследований» (Diaspora: A Journal of Transnational Studies). Термин «диаспора» за последние несколько десятилетий потерял свое первоначальное значение и сейчас применяется для таких групп, как иммигранты, гастарбайтеры, эмигрантская община и др. Х. Теолеолян был сторонником ограниченного использования термина. В статье представлены теоретические обобщения Х. Теолеоляна, а также наблюдения за типичными чертами общин диаспоры, определения диаспоры, расширения семантики термина и факторов, повлиявших на это.

Hratsin Vardanyan – *The Definition of Diaspora and the Reasons of the Expansion of the Semantic Domain of the Term According to Khachig Tölölyan*

Diaspora studies as a multidisciplinary field was formed at the beginning of the 1990s when by Khachig Tölölyan's initiative "*Diaspora: A Journal of Transnational Studies*" began to be published in Canada. The term Diaspora has lost its initial meaning during the last decades and is now used for such groups as immigrants,expatriates, refugees, guest workers, exile community and so on. Kh. Tölölyan supports the limited use of the term. The article contains Kh. Tölölyan's theoretical generalizations and observations about the features of a typically diasporic community, definition of Diaspora, semantic expansion of the term, as well as the factors leading to that expansion.

---

[1] Նշված բոլոր կետերը տե՛ս **Tölölyan Kh., Tölölyan Kh.,** Rethinking Diaspora (s): Stateless Power in the Transnational Moment. Diaspora: A Journal of Transnational Studies, 5(1): p. 19-28: Տե՛ս նաև **Tölölyan Kh.,** Diaspora studies: Past, present and promise, working paper 55, International Migration Institute, University of Oxford, UK, 2012, 11 pages. (http://www.migration.ox.ac.uk/odp/pdfs/WP55%20-Diaspora%20studies.pdf):